ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyukmerdzavan @ mail

01.04.2016թ.
թիվ 72

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77'-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2016 թվականի մարտ ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 6 /վեց/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2016 թվականի N22-Ա

ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի երկրորդ մասի, 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N65-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ներկայացուցչական ծախսեր>> հոդվածով նախատեսված գումարից 301 000 ՀՀ դրամ տրամադրել համայնքապետարանի աշխատակազմի, <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ, <<Կրթություն և մշակույթ >> միացյալ տնօրինության, <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, <<Հայ փոստ>> ՓԲԸ Մերձավանի մասնաճյուղի և <<Մերձավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ աշխատակցուհիներին /թվով 86 կին/ Կանանց տոնի՝ Մարտի 8-ի առթիվ նվերներ գնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի մարտի 1

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2016 թվականի N23-Ա

ՀԱՄԵՐԳԻ ՏՈՄՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի երկրորդ մասի , 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N65-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հոդվածով նախատեսված գումարից Կանանց տոնի՝ Մարտի 8-ի առթիվ ձեռք բերել երգչուհի Գոհար Խաչատրյանի, 2016 թվականի մարտի 7-ին կայանալիք, համերգի տոմսեր՝ 10 հատ 2000 դրամ արժողության և տրամադրել Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի մարտի 1

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016 թվականի N24-Ա

ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետի, 38-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանում 2016 թվականի մարտի 11-ին կայացած աճուրդային կարգով հողամասի վաճառքի արդյունքները, **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանում 2016 թվականի մարտի 11-ին կայացած, համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող, հողակադաստրային գնահատման 9-րդ գոտու, Երևանյան խճուղու 63/6 հասցեի բնակավայրերի նշանակության 0,00137 հեկտար հասարակական կառուցապատման հողամասի (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-065-0012-0127) աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

Աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Էլինա Ղազարի Խալաթյանի հետ, օրենքով սահմանված կարգով, կնքել առուվաճառքի պայմանագիր:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հիմք ընդունելով հողամասի առուվաճառքի պայմանագիրը՝ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի մարտի 11

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2016 թվականի N25-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՒՍԱՆՆԱ ՍՈՂՈՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13-ի N61-Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր Սուսաննա Սողոյանի ներկայացրած հայտը, **որոշում եմ.**

1. Անհատ ձեռնարկատեր Սուսաննա Սողոյանին տալ թույլտվություն՝ 2016 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 31-ը, ներառյալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար:
2. Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի մարտի 11

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

23 մարտի 2016 թվականի N5-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, **կարգադրում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Կատարել 2016 թվականի մարտի 17-ից մինչև 21-ը համայնքի վարչական տարածքում ցրտահարության հետևանքով գյուղացիական տնտեսությունների ծիրանենու այգիներին պատճառված վնասների հաշվարկ:

3. Հանձնարարել հանձնաժողովի նախագահ Ա. Եսայանին՝

1) կազմել ծիրանենու այգիների հողի սեփականատերերի և վարձակալների ցուցակը և ներկայացնել մարզպետարան:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2016 թվականի մարտի 23

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2016 թվականի մարտի 23-ի
N 5-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Եսայան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ:

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Գևորգյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:

Ա. Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

Պ.Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու անդամ:

Վ. Խուրշուդյան – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բնակիչ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ